նած տեղագրական քարտէսին վրայ, նոյն տեղը ցոյց կու տայ հրւ.–արեւմուտքը։ Ուրիշ երկու քարտէսներ եւս միեւնոյն տեղը կը նշանակեն Անքեարիմը։

Զ. 1384ին, Նիքողա Ֆրեսքոպալդի, Այնքեարիմը կը նկարագրէ հետեւեալ կերպով. «Զաքարիայի տան տեղւոյն վրայ շինուած է եկեղեցի մը Կոստանդիանոսի մօր Հեղինէի կողմէն։ Այս տեղւոյն մօտիկ կայ աղբիւր մը, հո՛ս էր որ Եղիսաբեթը ընդառաջեց Ս. Կուսին, երբ վերջինս կ՚այցելէր իրեն. շինուած եկեղեցին կամարակապ էր, բայց հիմակ այլք գոմի վերածած են զայն. հո՛ս է նաեւ այն վէմը, որ Բեթղեհէմի մանկանց կոտորածի ժամանակ, ինքն իրեն բացուեցաւ, և Եղիսաբեթ պահեց իր մանուկը հոն, և վէմը այսպէս կիսաբաց մնաց մինչեւ այսօր։ Հովիտին միւս կողմը, գրեթէ դիմացը, կայ նաեւ խիստ գեղեցիկ եկեղեցի մը, որ շինուած է նոյնպէս Ս. Հեղինէէն, հո՛ս է որ ծնած է Յովհ. Մկրտիչ եւ ուր կը բնակէին Զաքարիա եւ Եղիսաբեթ . . . »։

Է. Անցնինք այժմ վանահայր Կրեթենիոսի վկայութեան (1400)։ Ան Այնքեարիմի Յովհ. Ծննդեան եկեղեցին յիշելէ յետոյ, Հայոց վանքին նկատմամբ կու տայ հետեւեալ վկայութիւնը. «Աւելի հեռուն երրորդ լերան վրայ կը գտնուի Հայոց վանքը, որուն եկեղեցւոյն մէջ, աջակողմը, սեղանին մօտ, լեռը երկու կանգուն ճեղքուած և նորէն մոմի նման միացած է. երբ Հերովդէս Բեթղեհէմի մանուկները կը կոտորէր, Եղիսաբեթը Յովհ. Մկրտիչը առաւ և լեռը փախաւ և ըսաւ,— Ով լեռ, ընդունէ՛ մայրը եւ զաւակը, և լեռը բացուեցաւ»։

Ը. 1422ին, Յովհաննէս Պողոնըր կ՚այցելէ և կը գրէ. «Հոն մին միւսին վրայ, երկու եկեղեցիներ շինուած են, վերի եկեղեցին գրեթէ աւերակ է, վարի եկեղեցիին մէջ, պատին ագուցած են այն վէմը, ուր փոքրիկն Յովհաննէս պահուած մնաց մանկանց կոտորածին ժամանակ»։ Միեւնոյն դարուն վերջերը, Ֆրանչեսքօ Սուրիանօ, Ս. Երկրին մեծաւորը (Custode) այն եկեղեցւոյն վրայ կը գրէ հետեւեալը. «Իմ առաջին պաշտօնավարութեանս (1485), եկեղեցին տակաւին կանգուն էր ամբողջութեամբ, բայց յետոյ փլած է և չէ վերաշինուած, բայց սեղանները իրենց տեղերը կը մնան...»։ Իսկ 1483ին, Յովհաննէս տը Սոլմ և այլք կը գրեն թէ այս աւերումներուն հակառակ, ուխտաւորք երկար ժա-